ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«27» Հոկտեմբերի 2024 թ. № 1562-Լ

ՀՐԱՄԱՆ

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՌԻՍԿԱՅԻՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 348-րդ հոդվածի 1-ին մասը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի ռիսկային համարվող փոխհատուցվող գումարների հիմնավորվածության ուսումնասիրության դիմումի ձևը և լրացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

11/27/2024

X

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հավելված

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի

2024թ. հոկտեմբերի 27 -ի N 1562 -Լ հրամանի

Դ Ի Մ Ո Ւ Մ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ	Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
2. Հարկ վճարողի անվանումը	
3. Հարկ վճարողի գտնվելու վայրը	
4. Հարկ վճարողի հեռախոսահամարը	

5. Խնդրում եմ իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից հետո ընկած՝ ստորև նշված հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացած՝ ռիսկային համարվող փոխհատուցվող գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն՝

Հարկատեսակը	Տարեթիվը	Հաշվետու ժամանակաշրջանը	Ռիսկային համարվող փոխհատուցվող գումարը, դրամ
1) ավելացված արժեքի հարկ			
ընդամենը			
2) ակցիզային հարկ			
ընդամենը			

6. Խնդրում եմ իրականացնել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը ներառող՝ ստորև նշված հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացված ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացած՝ ռիսկային համարվող փոխհատուցվող գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն՝

Հարկատեսակը	Տարեթիվը	Հաշվետու ժամանակաշրջանը	Ռիսկային համարվող փոխհատուցվող գումարը, դրամ
1) ավելացված արժեքի հարկ			
ընդամենը			
2) ակցիզային հարկ			
ընդամենը			

Պատասխանատու անձի _____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳ

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԻ

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 348-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի ռիսկային համարվող փոխհատուցվող գումարների հիմնավորվածության ուսումնասիրության դիմումը (այսուհետ՝ դիմում) ներկայացվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի փետրվարի 1-ի N155-Ն որոշմամբ սահմանված չափանիշներին համապատասխան ռիսկային համարվող ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) կամ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների հիմնավորվածությունն ուսումնասիրելու և ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված՝ առկա ԱԱՀ կամ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարները միասնական հաշվին մուտքագրելու, ինչպես նաև ուսումնասիրության արդյունքներում չհիմնավորված ԱԱՀ կամ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարները հաշվառումից հանելու նպատակով: Դիմումը ներկայացվում է նաև օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա ռիսկային համարվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների հիմնավորվածությունն ուսումնասիրելու համար: Դիմումում բոլոր արժեքային մեծությունները լրացվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

2. Դիմումի ձևի՝

1) 1-ին կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),

2) 2-րդ կետում լրացվում է իրավաբանական անձի լրիվ անվանումը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում «ԱՁ» նշումը և անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,

3) 3-րդ կետում լրացվում է հարկ վճարողի գտնվելու վայրը (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ ֆիզիկական անձի բնակության վայրը),

4) 4-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հեռախոսահամարը,

5) 5-րդ կետում լրացվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ընկած՝ որևէ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացած՝ ռիսկային համարվող ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի և ըստ հարկատեսակների: Ընդ որում, 5-րդ կետի աղյուսակի «Ռիսկային համարվող փոխհատուցվող գումարը» սյունակում լրացվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված միասնական հաշվարկներով, այդ թվում՝ ճշտված, առաջացած ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի ռիսկային համարվող փոխհատուցվող գումարը,

6) 6-րդ կետում լրացվում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ի ներառող՝ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացված միասնական հաշվարկներով (այդ թվում՝ տվյալ ժամանակաշրջանների համար 2025 թվականի հունվարի 1-ից հետո ներկայացված ճշտված հաշվարկներով) առաջացած՝ ռիսկային համարվող փոխհատուցվող գումարների վերաբերյալ տեղեկատվությունը: Ընդ որում, 6-րդ կետի աղյուսակի «Ռիսկային համարվող փոխհատուցվող գումարը» սյունակում լրացվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված միասնական հաշվարկներով, այդ թվում՝ ճշտված, առաջացած ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի ռիսկային համարվող փոխհատուցվող գումարը:

3. Դիմումի ձևում 5-րդ և 6-րդ կետերը միաժամանակ չեն լրացվում: 2025 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների և մինչև 2025 թվականը ներառված հաշվետու ժամանակաշրջանների մասով դիմումը լրացվում և հարկային մարմին է ներկայացվում առանձին-առանձին: